«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻԱՎՈՐՅԱԼ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ՝
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

26. 06. 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ՀԱՍՄԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԿՈՆՋՈՅԱՆԻ

«Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական մեթոդները» թեմայով ԺԹ.00.05 «Զարգացման և կրթության հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հասմիկ Ալբերտի Կոնջոյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է ժամանակակից կրթության և զարգացման հոգեբանության առավել արդիական և գիտագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներից մեկին՝ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացների արդյունավետության բարձրացմանը նպաստող հոգեբանական և հոգեբանա-մանկավարժական մեթոդների ուսումնասիրմանը, վերլուծությանը և փորձարարական հիմնավորմանը: Ներկայացված հետազոտությունը առանձնանում է իր արդիականությամբ, գիտական հիմնավորվածությամբ և գործնական նշանակությամբ: Հեղինակը նպատակադրել է բացահայտել «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդի» կիրառման հնարավորությունները երեխաների բազմակողմանի զարգացման գործընթացում, ինչը լիովին համապատասխանում է ներկայացված գիտական խնդրին: Առաջադրված խնդիրներն ապահովում են հետազոտության նպատակների ամբողջական իրականացումը և հնարավորություն են տալիս ստանալ տեսական ու կիրառական նշանակություն ունեցող արդյունքներ: Հատկանշական է, որ հեղինակը չի

սահմանափակվել միայն առանձին տեսությունների նկարագրությամբ, այլ փորձել է դրանց միջև գտնել փոխլրացնող և արդյունավետ կապեր: Սա հատկապես կարևոր է ժամանակակից կրթական միջավայրում, որտեղ առավել արդյունավետ են համարվում բազմագործոն և բազմամակարդակ կրթական մոտեցումները: Ներկայացված աշխատանքում հաջողությամբ իրականացվել է ավանդական և այլընտրանքային կրթական համակարգերի համեմատական վերլուծություն, որի հիման վրա առաջարկվել է նոր ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդ: Տեսական վերլուծությունը կատարված է խորությամբ, պահպանվել է գիտական օբյեկտիվությունը, իսկ ներկայացված փաստերը նպաստում են հետազոտական խնդրի ամբողջական ընկալմանը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանական բնութագրերի ուսումնասիրությունը: Հեղինակը ցույց է տալիս տվյալ տարիքային փուլերի զարգացման առանձնահատկությունները, ճանաչողական գործընթացների, հուզական ոլորտի, միջանձնային հարաբերությունների և անձնային հատկանիշների ձևավորման օրինաչափությունները: Այս վերլուծությունը կարևոր հիմք է ստեղծում հետագա փորձարարական ուսումնասիրության համար: Աշխատանքի գիտական նորույթը ևս առանձնահատուկ գնահատանքի է արժանի: Առաջին անգամ փորձ է արվել միասնական համակարգում դիտարկել ավանդական և այլընտրանքային կրթական մեթոդների փոխկապակցվածությունը և դրանց հիման վրա մշակել ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մոտեցում: Այս հանգամանքը թույլ է տալիս աշխատանքը գնահատել ոչ միայն որպես տեսական հետազոտություն, այլև որպես նոր գիտագործնական ուղղության ձևավորման փորձ: Ատենախոսության երրորդ գլուխը, որը նվիրված է հեղինակի կողմից մշակված «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդին», աշխատանքի առավել արժեքավոր և ինքնուրույն գիտական բաժիններից է: Այստեղ ներկայացվում է ոչ միայն տեսականորեն հիմնավորված, այլև գործնականում փորձարկված և արդյունավետությունը ապացուցած կրթադաստիարակչական համակարգ: Հեղինակի կողմից մշակված ծրագիրը կառուցված է երեխայի զարգացման բազմագործոն բնույթի գիտակցման հիման վրա և ուղղված է ճանաչողական, հուզական,

անձնային և սոցիալական ոլորտների համաժամանակյա զարգացմանը: Հատկանշական է, որ հեղինակն առաջարկում է կրթական գործընթացի այնպիսի կազմակերպում, որտեղ ուսուցումը չի սահմանափակվում միայն ակադեմիական գիտելիքների փոխանցմամբ, այլ դառնում է երեխայի ամբողջական զարգացման միջավայր: Նման մոտեցումը լիովին համահունչ է ժամանակակից կրթության միջազգային միտումներին, որոնք առաջնային են համարում երեխայակենտրոն, զարգացնող և ներառական կրթությունը: Ատենախոսության կարևոր առավելություններից է ռեթեստավորման իրականացումը: Ռեթեստավորման արդյունքները հնարավորություն են տվել հաստատել, որ ձեռք բերված դրական փոփոխությունները չեն կրել պատահական բնույթ և պահպանվել են որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Ատենախոսության արդյունքները ցույց են տալիս, որ «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական» մեթոդի կիրառումը զգալի դրական ազդեցություն է ունեցել երեխաների ճանաչողական գործընթացների զարգացման վրա: Առանձնապես կարևոր են ստեղծագործական մտածողության, ուշադրության կազմակերպվածության, հիշողության արդյունավետության և ինտելեկտուալ գործունեության ցուցանիշների աճը: Ստացված արդյունքները փաստում են, որ կրթական գործընթացում տարբեր մեթոդաբանական մոտեցումների արդյունավետ համադրումը կարող է ապահովել ավելի բարձր արդյունքներ, քան առանձին մեթոդների կիրառումը: Հետազոտության արդյունքների վերլուծությունը վկայում է նաև այն մասին, որ ինտեգրված մեթոդի կիրառումը դրական ազդեցություն է ունեցել երեխաների անձնային զարգացման վրա: Արժեքավոր են նաև հուզական ոլորտի ուսումնասիրության արդյունքները: Հեղինակի կողմից արձանագրված ագրեսիվության և տագնապայնության մակարդակների նվազումը վկայում է այն մասին, որ առաջարկվող մեթոդը նպաստում է երեխաների հոգեբանական անվտանգության ապահովմանը և դրական հուզական ֆոնի ձևավորմանը: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ ինտեգրված մեթոդի կիրառումը նպաստել է հաղորդակցական կարողությունների զարգացմանը, համագործակցության հմտությունների ձևավորմանը և սոցիալական հարմարվողականության բարձրացմանը: Այս արդյունքները ևս մեկ անգամ ընդգծում են

աշխատանքի բազմակողմանի բնույթը և դրա կիրառական արժեքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կարելի է գնահատել որպես ամբողջական և հիմնավորված: Օգտագործված մեթոդական ապարատը համապատասխանում են ժամանակակից գիտական պահանջներին, իսկ վիճակագրական մշակումները հնարավորություն են տալիս վստահելիորեն մեկնաբանել ստացված արդյունքները: Հետազոտության մեծ ընտրանքը, բազմակողմանի ախտորոշիչ գործիքակազմը և արդյունքների համապարփակ վերլուծությունը բարձրացնում են աշխատանքի գիտական արժանիքները: Այդուհանդերձ առկա են որոշ դիտարկումներ, որոնց վերաբերյալ ակնկալվում է ատենախոսի մեկնաբանությունները: Այսպես՝

1. Հաշվի առնելով, որ հետազոտությունն ընդգրկում է զարգացման տարբեր փուլերում գտնվող երկու տարիքային խմբեր՝ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ, նպատակահարմար կլիներ հիշողության և ուշադրության ցուցանիշները ներկայացնել առանձին գրաֆիկական պատկերներով: Նման մոտեցումը հնարավորություն կտար առավել հստակ արտացոլելու յուրաքանչյուր տարիքային խմբի զարգացման առանձնահատկությունները, դինամիկան և արձանագրված փոփոխությունների բնույթը:

2. Հետազոտությունն առանձնանում է մեծածավալ ընտրանքով և վիճակագրական հարուստ տվյալներով, սակայն դրա կիրառական նշանակությունն ավելի տեսանելի կդառնար, եթե հեղինակը ներառեր մի քանի կոնկրետ դեպքերի կամ քեյսերի վերլուծություն: Անհատական օրինակների ներկայացումը հնարավորություն կտար առավել ամբողջական պատկերացում կազմել «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական» մեթոդի ազդեցության մեխանիզմների վերաբերյալ, բացահայտել երեխաների զարգացման անհատական առանձնահատկությունները և ներկայացնել միջամտության արդյունավետության կոնկրետ դրսևորումները:

3. Ատենախոսության հիմնական գիտական նորույթը հանդիսանում է «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական» մեթոդի մշակումը և փորձարարական հիմնավորումը: Հաշվի առնելով մեթոդի առանցքային նշանակությունը հետազոտության ընդհանուր

տրամաբանության մեջ՝ նպատակահարմար կլիներ առավել հանգամանորեն ներկայացնել դրա տեսական հիմքերը, կառուցվածքային բաղադրիչները, կիրառման փուլերը, օգտագործվող տեխնիկաները և գործնական իրականացման առանձնահատկությունները:

4. Հետազոտության մեջ ընդգրկված են զարգացման երկու տարբեր տարիքային խմբեր, և որոշ առումներով նպատակահարմար կլիներ հետազոտությունը կենտրոնացնել միայն մեկ տարիքային խմբի վրա:

5. Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները գիտական աշխատանքի կարևոր բաղադրիչներից են, քանի որ դրանք սեղմ և հստակ ձևով արտացոլում են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակային մոտեցումները: Այս տեսանկյունից պաշտպանության ներկայացված չորրորդ դրույթը որոշ չափով ծանրաբեռնված է մի քանի գաղափարների միաժամանակյա ներառմամբ, ինչի հետևանքով դժվարանում է դրա անմիջական ընկալումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Ալբերտի Կոնջոյանի «Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական մեթոդները» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, գիտականորեն հիմնավորված և արդիական հետազոտություն է, որն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն զարգացման և կրթության հոգեբանության բնագավառի համար: Ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման համար ներկայացվող թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Հասմիկ Ալբերտի Կոնջոյանը արժանի է ԺԹ.00.05 «Զարգացման և կրթության հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Աշխատանքի վերաբերյալ կարծիքը և եզրակացությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության և կրթական գիտությունների ամբիոնի 15. 06. 2026թ նիստում:

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության և կրթական գիտությունների ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր Ռուբեն Նաղդյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վազգեն Պողոսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Մեհրաբյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Անժելիկա Այվազյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Աննա Խաչատրյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արա Ֆիրյանը, հոգեբանական հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Մուրադյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Լիլիթ Խաչատրյանը, ամբիոնի դասախոսներ Տաթևիկ Վաթյանը, Մանանա Ենոքյանը:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
հոգեբանության և կրթական գիտությունների
ամբիոնի վարիչ, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ն. Հակոբյան**

Ամբիոնի վարիչ Ն. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
գիտական քարտուղար՝ **Մ. Սարգսյան**